Ամփոփ տեղեկատվություն

- Ձեր բժիշկը և առողջապահական թիմը կարող են օգնել Ձեզ որոշելու, թե արդյոք հոսպիսը հարմար է Ձեզ համար:
- Հոսպիսում գրանցվելուց հետո Դուք դեռ կարող եք կապ պահպանել Ձեր խնամքի ուռուցքաբանական թիմի հետ:
- Հոսպիսը կհետևի Ձեր ցավերին և ախտանշաններին:
- Հոսպիսը կօգնի Ձեզ և Ձեր ընտանիքին Ձեր խնամքի հետ կապված որոշումներ կայացնելիս:
- Աջակցության ծառայությունները հասանելի են Ձեզ և Ձեր ընտանիքին կամ խնամակալներին:
- Medicare-ը, Medicaid-ը և մասնավոր ապահովագրությունների մեծ մասը փոխհատուցում են հոսպիսում մնալը:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հիվանդներն ավելի երկար են ապրում հոսպիսում և ունեն կյանքի ավելի բարձր որակ:

Խնամքը տրամադրվում է պրոֆեսիոնալների և կամավորների փորձառու թիմի կողմից և կարող է ներառել՝

Հոսպիսը հարմարավետ խնամք և կարեկից աջակցություն է այն անհատներին, ովքեր ունեն կյանքին վտանգ սպառնացող հիվանդություն և մահացու ախտորոշում:

MOQC
MICHIGAN ONCOLOGY QUALITY CONSORTIUM

Blue Cross Blue Shield of Michigan
Nonprofit corporations and independent licensees of the Blue Cross and Blue Shield Association

Հարցեր , որոնք, հնարավոր է, ունենաք

Հոսպիս

ՀՈՍՊԻՍԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

ԻՆՉՊԵ՞Ս ԻՄԱՆԱՄ՝ ԱՐԴՅՈՔ ՀՈՍՊԻՍԸ ՃԻՇՏ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ Է ԻՆՁ ՀԱՄԱՐ

Եթե Ձեր բժիշկը Ձեզ ասել է, որ Դուք ունեք կյանքին վտանգ սպառնացող հիվանդություն, ապա հոսպիսային խնամքը Ձեզ համար հարմար տարբերակ է:

Ի՞ՆՉ Է ՀՈՍՊԻՍԸ ԵՎ Ի՞ՆՉ Է ԱՆՈՒՄ ՀՈՍՊԻՍԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԸ:

- Հոսպիսը հարմարավետ խնամք և սրտացավ աջակցություն է այն անհատների համար, ովքեր բախվել են վերջնական ախտորոշման հետ
- Հոսպիսն օգնում է անձին և նրան աջակցող թիմին
- Հոսպիսի նպատակն է ապահովել, որ անձի էմոցիոնալ և ֆիզիկական կարիքները բավարարված լինեն
- Հոսպիսը թույլ է տալիս անձին արժանապատվորեն դիմակայել ախտորոշմանը

ԻՆՉՊԵ՞Ս ԸՆՏՐԵԼ ՄԵԿ ՀՈՍՊԻՍ, ԵԹԵ ԿԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀՈՍՊԻՍՆԵՐ, ՈՐՈՆՔ ԿԱՐՈՂ ԵՆ ԶԲԱՂՎԵԼ ԻՄ ԽՆԱՄՔՈՎ

- Նշանակեք անվճար տեղեկատվական հանդիպում ցանկացած հոսպիսում
- Այցելեք **medicare.gov/hospicecompare** Ձեզ մոտ գտնվող հոսպիսային գործակալությունները գտնելու համար
- Քննարկեք Ձեր բժշկի և առողջապահական թիմի հետ

ՀՈՍՊԻՍԻ ԽՆԱՄՔ

ՈՐՏԵ՞Ղ ԿԱՐՈՂ ԵՄ ՍՏԱՆԱԼ ՀՈՍՊԻՍԱՅԻՆ ԽՆԱՄՔ

- Տանը
- Մասնագիտացված բուժքույրական հաստատությունում (Skilled Nursing Facility, SNF)
- Ծերանոցում (Assisted Living Facility, ALF)
- Մեծահասակների խնամքի տանը (Adult Foster Care, AFC)
- Հոսպիս կենտրոնում
- Ցանկացած վայրում, որտեղ ապրում եք

Ի՞նչ հաճախականությամբ կայցելի ինձ հոսպիսը,երբ ես նրանց հիվանդը լինեմ և որքա՞ն անհատականացված է իմ խնամքը:

Բոլոր հոսպիսները անհատական մոտեցում կցուցաբերեն Ձեզ և կայցելեն Ձեզ՝ ելնելով Ձեր կարիքներից: Հոսպիսի բոլոր հիվանդները կունենան բժշկի, բուժքրոջ, սոցիալական աշխատողի, հոգևոր խնամքի, հոսպիսի օգնականների և կամավորների օգնության հնարավորություն:

Անձնակազմը հասանելի է արտակարգ իրավիճակների և հարցերի համար օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

ԿԱՐՈ՞Ղ ԵՄ ՀՐԱԺԱՐՎԵԼ ՀՈՍՊԻՍԻՑ

Դուք կարող եք ցանկացած ժամանակ հրաժարվել հոսպիսից և կրկին գրանցվել, երբ պատրաստ կզգաք:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԿԱ՞Ն ԱՐԴՅՈՔ ԻՆՁ ՀԱՍԱՆԵԼԻ ԱՅԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Որոշ հոսպիսներ կարող են առաջարկել մերսում, երաժշտությամբ, կենդանիներով կամ արվեստով թերապիա: Հարցրեք առկա ծառայությունների մասին:

Ի՞ՆՉ ԵՆ ԱՆՈՒՄ ՀՈՍՊԻՍԻ ԿԱՄԱՎՈՐՆԵՐԸ

Կամավորները բարեհամբույր այցելուներ են, ովքեր ցուցաբերում են ընկերակցություն և աջակցություն:

Ի՞ՆՉ ԱՆԵԼ, ԵԹԵ ԽՆԱՄԱԿԱԼԸ «ՀԱՆԳՍՏԻ» ԿԱՐԻՔ ՈՒՆԻ:

Եթե Ձեր խնամակալը հանգստի կարիք ունի Ձեզ ամենօրյա խնամք ապահովելու ընթացքում, խոսեք Ձեր հոսպիսի թիմի հետ: Թիմը կքննարկի տարբերակները և կպլանավորի ծառայություն, որը բավարարում է Ձեր ընտանիքի/Ձեր կարիքները:

ԿԱ՞Ն ԱՐԴՅՈՔ ՍԳՈ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հասանելի են սգո ծառայություններ, ներառյալ անհատական և խմբային աջակցություն վշտի ժամանակ, խորհրդատվություն և այլ ծառայություններ: